ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ԱՍԵՐ բանասէրներուն Հայոյական բան մը ընել ուզելով, աս օրագրիս մէջ երբեմն երբեմն ազգային մատենագրութենէն 'ի զատ՝ կընայինք որ հիմակուան օտար ազգաց մատենագրութեանը վրայ ալ խօսինք, ու մեր ատենի երևելի մատենագիրներուն գրուածքներէն գէթ մանր ճաշակներ տանք՝ արձակ կամ ոտանաւոր թարգմանութեամբ։ Այս անգամ հոս գրածնիս Ամարթինին գեղեցիկ ոտանաւորներէն մէկն է՝ ՀԻՇԴ ԹԱՐԳՄԱՆԱԾ։ — Ամարթին հիմա բոլոր Եւրոպայի մէջ խիստ անուանի մատենագիր է, ու Դաղղիացւոց առաջին բանաստեղծը կրսեպուի։ Իր գրուածքներուն երևելի յատկութիւնները ասոնք են. հաստատուն բարեպաշտութեան հոգի, փափուկ զգացմունք, բարակ մտածութիւն, և վառվռուն երևակայութիւն։ Իրեն գլխաւոր բանաստեղծութիւններն են Յորհրդածութիւնք, Դաշնակութիւնք, Յոսէն, և ուրիշ շատ մանր երգեր ու տաղեր։ Մեր հիմա թարգմանածը Դաշնակութեանց մէկ կտորն է. ուրիշ անգամ մէկալներուն ալ ճաշակը կուտանք։

Աղջիկ մանկան զարթուցելոյ։

Ո՛վ հայր, զքեզ իմըս պաշտէ հայրը,
Քեզ ծունր ածէ մահացուն.
Քաղցր և ահեղ անուանդ իմ մայր
Երկրպագէ եռանդուն։
Ասեն թէ այս արեգ պայծառ
Խաղ ինն է քո առաջի,
Եւ ընդ ոտիւք քոյին անձառ
Իբր ըզկանթեղ տատանի։
Ասեն թէ դու և ՀՐՆՀՐԵՂԿԱՆՑ
Տաս 'ի դաշտի ծընանել,
Եւ աղարծի մանրիկ մանկանց
Հոգի՝ ըզքեզ ճանաչել։
Ասեն թէ դու ես որ պրՃնես
Ըզբուրաստան ծաղկաւէտ,
Եւ ոչ առանց քո տայ պարտէզ
Ախորժ պրտուղս 'ի մեր պէտ։
Ի քո պարգևս տիեզերք
Առ հասարակ վայելեն,
Եւ ոչ զեռուն զբրկի երբէք
Ցայսմ 'ի բնութեան խրախճանէն։
Գառն իւր արօտ առնու զծոթրին,
Ուշն 'ի ցրդին ձրգտի գիւտ,
Ճանճ 'ի շրթունսըս պրնակին
Զիմոյ կաթին ծրծէ հիւթ։
Զամբ արտուտին ետուր ըզկուտ
Զոր սերմանող տայ հողմոց.
Ճրնճղուկ 'ի կալ դիմէ անձկոտ,
Տրղայն 'ի մօրն իւր 'ի ծոց։
Եւ թռ առնումք օր ըստ օրէ
Զանհատական քո պարգևս.
Այդուն ցերեկս 'ի միջօրէ
Աղերսելով ցանգ ըզքեզ։
Ասուած, և ես թոթով 'ի բան
Կարգամ զանունդ ահաւոր.
Բաբէ, և ձայն տրխեղծ մանկան
Ի նուագ խառնի երկնաւոր։
Ասեն թէ դու տէր ախորժես
Զաղերս անզօր մանկտուոյն,
Զի պարզամիտք են քաղցր և հեզ,
Թէպէտ 'ի միտ ոչ առնուն։
Ասեն թէ մեր պաշտօն խոնարհ
Քեզ հեշտալուր ընծայի,
Եւ թէ զուարթնոց յերկինս է պար,
Եւ մեք հրեշտակք եմք յերկրի։
Օ՜ն թէ լքսես յայնչափ բարձանց
Զուիտ մեր սրտից եռանդուն,
Ես հայցեցից ջերմ 'ի թախանձ
Զտիեզերաց պէտս համբուն։
Տուր տէր աղբերց յրտակ ըզջուր,
Եւ ըզփետուր ՀՐՆՀՐԵՂԿԻՆ,
Գառանց գրզաթ սուրբ և մաքուր,
Դաշտաց ըստուեր ցօղագին։
Տուր հիւանդին բրժշկութիւն,
Եւ մուրացկին հաց յագուրդ.
Տուր բնակարան ողորմ որբոյն,
Եւ գերելոց արձակուրդ։
Բազմածրնունդ արա ըզտուն
Հօր առ 'ի քէն երկիւղած.
Տուր ինձ լինել զգօն ւ իմաստուն,
Եւ մայրս իցէ անկասկած։
Ուշիմ եղէց, թէ և տրհաս,
Այն տաճարի մանկան պէս,
Այդուն այդուն զոր 'ի պնարս
Մահճիս դիտեմ բերկրատես։
Զարդարութիւն տընկեա յոգիս,
Ճրշմարտութիւն 'ի շրթունս.
Պրտղաբերցէ բանդ 'ի սրտիս
Զերկիւղ ըզքարբս քաղցունս։
Եւ քաղցրասցի քեզ իմ բարբառ
Իբրև ըզծուին այն դիզան,
Յանուշահոտ զոր 'ի բուրվառ
Ճօճեն տրղայք ինձ նման։